

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 31/7

28 հուլիսի 2015 թ.

Քննարկվեց «Հագոյան» Ա/Կ 06.07.2015 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ 08.07.2015 թ-ի թիվ 6106956 ակտի դեմ:

«Հագոյան» ԱԿ բողոքում բերված փաստարկները.

2015 թ-ի հունիսի 19-ին Շենգավիթի հարկային տեսչությունից փոստային ծանուցմամբ ստացվել է տեսչության պետի 15.06.2015 թ.-ի թիվ 6106956 հանձնարարագիրը, որի համաձայն ՀՀ Ֆինանսների նախարարության Շենգավիթի հարկային տեսչության աշխատակիցներին հանձնարարվել է «Հագոյան» Ա/Կ-ում ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմինն վերապահաված իրավասությունների սահմաններում ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի առանձին պահանջների կատարման ճշտությունը պարզելու նպատակով իրականացնել աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում:

2015 թ-ի հուլիսի 2-ին ստացվել է կատարված ստուգման արդյունքում կազմված 6105956 ակտը, որը ոչ իրավաչափ է, քանզի ստուգումը կատարվել է օրենսդրությամբ ամրագրված պահանջների կոպիտ խախտումներով:

Ակտի համաձայն Ա/Կ-ում թվով 5 (հինգ) վարձու աշխատողներ ձևակերպված չեն եղել օրենսդրությամբ սահմանված կարգով, չի կատարվել ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 14 հոդվածի 1-ին կետի և 85-րդ հոդվածի 1-ին կետերի պահանջները, որի համար նախատեսված է պատասխանատվություն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ կետի հատկանիշներով: Արդյունքում, կազմված ակտի նախագծի համաձայն առաջադրվել տուգանք՝ 750.000 ՀՀ դրամի չափով:

«ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ստուգումն իրականացնող անձանց գործողությունները, ինչպես նաև ստուգման արդյունքում կազմված ակտը երկու ամսվա ընթացքում, եթե օրենքով այլ բան չի նախատեսվում կարող են բողոքարկվել այն պետական մարմին, որին անմիջականորեն ենթարկվում է (են) ստուգող անձը (անձինք), կամ դատարան: Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն բողոքները վերադասության կարգով քննության են առնվում, և դրանց վերաբերյալ որոշումներն ընդունվում են ոչ ուշ, քան բողոքն ստացվելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում:

Իրացնելով օրենքով ամրագրված բողոքարկման իրավունքը, կազմված ակտը համարում են ոչ իրավաչափ ստորև շարադրված հետևյալ հանգամանքներից ելնելով.

1. Ա/Կ-ում աշխատում են ընդհանուր թվով 17 անձ (որից 3-ը գտնվում են հղիության և ծննդաբերության արձակուրդում): Յուրաքանչյուր աշխատակցի հետ կնքվել է աշխատանքային պայմանագիր՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի պահանջներին համապատասխան (կից ներկայացված են բոլոր պայմանագրերի պատճենները): Հանձնարարված ստուգման շրջանակներում հարկային տեսուչների

կողմից չի ստուգվել որևիցե պայմանագրի առկայության փաստ և ստուգումը սահմանափակվել է բացառապես աշխատողների անունների և ազգանունների հարցմամբ:

2. «Եկամտային հարկի մասին» 2010 թ-ի դեկտեմբերի 22-ին ընդունված ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ հարկային գործակալները պարտավոր են յուրաքանչյուր ամսվա համար այդ ամսվան հաջորդող ամսվա 20-ից ոչ ուշ բացառապես էլեկտրոնային եղանակով հարկային մարմին ներկայացնել սահմանված ձևի եկամտային հարկի ամփոփ հաշվարկ՝ ներառելով տեղեկություններ տվյալ հարկային գործակալից եկամուտներ ստացող ֆիզիկական անձանց վերաբերյալ:

2015 թ-ի հունիս ամսվա ընթացքում կնքվել են նոր աշխատանքային պայմանագրեր՝ աշխատանքի են ընդունվել 5 աշխատակից, որոնց վերաբերյալ էլեկտրոնային եղանակով հարկային մարմին սահմանված ձևի եկամտային հարկի ամփոփ հաշվարկ ներկայացնելու իրավունք Ա/Կ-ն ունեցել է մինչև 2015 թ-ի հուլիսի 20-ը՝ հիմք ընդունելով մեջբերված իրավանդումը:

3. «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի բ) կետի համաձայն՝ ստուգումն իրականացնող անձանց պարտականությունն է պահպանել տնտեսավարող սուբյեկտի՝ օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված իրավունքներն ու շահերը: Նույն օրենքի 9-րդ հոդվածի գ) կետի համաձայն տնտեսավարող սուբյեկտի պաշտոնատար անձանց իրավունքներից է՝ ներկայացնել բացատրություններ, պարզաբանումներ, հարուցել միջնորդություններ:

Մինչդեռ, իրականացված ստուգման շրջանակներում իրացնելով այդ իրավունքը չի հաջողվել ստուգումն իրականացնող հարկային տեսուչներին ներկայացնել բացատրություններ արդեն իսկ կնքված աշխատանքային պայմանագրերի առկայության վերաբերյալ և պարզաբանել օրենքով տրված կարգավորումը:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ հարկային տեսուչների կողմից խախտվել է նաև «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը, որի համաձայն՝ ստուգումն իրականացնող անձինք պարտավոր են պահպանել ստուգման հետ առնչվող՝ ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները: Մինչդեռ, խախտվել է թե «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին», թե «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքները:

Այսպիսով, ղեկավարվելով «ՀՀ-ում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ մասով «Հագոյան» Ա/Կ խնդրում է առոչինչ ճանաչել թիվ 6105956 ակտը:

ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի 15.06.2015 թ. թիվ 6106956 հանձնարարագրի համաձայն ՀՀ օրենսդրությամբ հարկային մարմին վերապահված իրավասությունների սահմաններում ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի առանձին պահանջների կատարման ճշտությունը պարզելու նպատակով «Հագոյան» Ա/Կ-ում իրականացվել է աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ

օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու ճշտության (առանց գրավոր պայմանագրի (հրամանի) կնքման աշխատող պահելու դեպքերի բացահայտմանն ուղղված) ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի 08.07.2015 թ-ի թիվ 6106956 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով եկամտային հարկի գծով լրացուցիչ գանձման է առաջադրվել 750.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ Ա/Կ-ում թվով 5 (հինգ) վարձու աշխատողներ ձևակերպված չէր ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, չեն կատարվել ՀՀ Աշխատանքային օրենսգրքի 14 հոդվածի 1-ին կետի և 85-րդ հոդվածի 1-ին կետերի պահանջները, որի համար նախատեսված է պատասխանատվություն «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի 5-րդ կետի հատկանիշներով: Արդյունքում, թվով 5 (հինգ) չձևակերպված վարձու աշխատողների համար լրացուցիչ գանձման է առաջադրվել 750.000 դրամ:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ պետի 15.06.2015 թ-ի թիվ 6106956 հանձնարարագրի համաձայն, հանձնարարագրում ընդգրկված պաշտոնատար անձինք 18.06.2015 թ-ին այցելել են «Հագոյան» Ա/Կ-ին պատկանող խանութ:

Ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից 18.06.2015 թ-ին կազմվել է թիվ 1 արձանագրությունը (այսուհետ նաև՝ թիվ 1 արձանագրություն), որի համաձայն այցելության պահին խանութում աշխատում էին թվով 11 (տասնմեկ) վարձու աշխատողներ, որոնցից Լամարա Վահրամյանի, Հազարապետ Մեսրոպյանի, Անի Ներսիսյանի, Նունե Շահինյանի և Նունե Խլղաթյանի հետ չկար կնքված գրավոր աշխատանքային պայմանագրեր կամ հրամաններ: Թիվ 1 արձանագրությունում նշվել է նաև, որ վերը նշված թվով 5 (հինգ) աշխատակիցները հրաժարվել են ներկայացնել անձը հաստատող որևէ փաստաթուղթ:

Ի լրումն թիվ 1 արձանագրության 19.06.2015 թ-ին կազմվել է թիվ 1 արձանագրությունը, որի համաձայն ՀՀ ՖՆ Շենգավիթի ՀՏ-ում առկա տեղեկատվական բազայի ուսումնասիրությունից պարզվել է, որ ստուգման առաջին օրը՝ 18.06.2015 թ-ին, «Հագոյան» Ա/Կ տնօրենի կողմից հարկային տեսչություն է ներկայացվել թիվ 1 արձանագրությունում նշված թվով 5 (հինգ) աշխատակիցներից թվով 4 (չորս) աշխատակիցների գրանցման հայտերը:

Միևնույն ժամանակ ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից 26.06.2015 թ-ին կազմվել է ՀՀ կառավարության 25.07.2013 թ-ի թիվ 1259-Ն որոշման Հավելված 2-ով սահմանված արձանագրությունը, որում նշված են թիվ 1 արձանագրությունում հիշատակված թվով 5 (հինգ) աշխատակիցների անունները և ազգանունները:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ ստուգման առաջին օրը՝ 18.06.2015 թ-ին, ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց ստուգման պահին արձանագրված թվով 11 (տասնմեկ) վարձու աշխատողների վերաբերյալ կնքված գրավոր աշխատանքային պայմանագրեր կամ հրամաններ չեն ներկայացվել: Հետևապես տվյալ դեպքում հարց է առաջանում, թե թվով 11 (տասնմեկ) վարձու աշխատողների վերաբերյալ կնքված գրավոր աշխատանքային պայմանագրեր կամ հրամաններ չներկայացվելու պայմաններում ստուգող անձինք ինչպես են որոշել, որ թվով 11 (տասնմեկ) վարձու աշխատողներից գրավոր աշխատանքային պայմանագրեր կամ հրամաններ չեն կնքվել միայն թվով 5 (հինգ) աշխատողների հետ:

«Հագոյան» Ա/Կ տնօրենի կողմից 19.06.2015 թ-ին (ստուգման հաջորդ օրը) հարկային տեսչություն են ներկայացվել թիվ 1 արձանագրությունում նշված թվով 5 (հինգ) աշխատակիցներից թվով 4 (չորս) աշխատակիցների գրանցման հայտերը, ինչպես նաև աշխատակիցների հետ կնքված աշխատանքային պայմանագրերը, որոնք ըստ էության ուսումնասիրության առարկա չեն հանդիսացել:

Տվյալ դեպքում հարկ է նշել, որ աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստն արձանագրելու կարգը և արձանագրության ձևը սահմանված են ՀՀ կառավարության 25.07.2013 թ-ի թիվ 1259-Ն որոշմամբ (այսուհետ Որոշում):

Որոշմամբ սահմանված Հավելված 1-ի 4-րդ կետի համաձայն. «Աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) փաստն արձանագրելու համար ստուգում իրականացնող անձինք իրականացնում են հետևյալ քայլերը՝

1) գործատուից պահանջում են փաստացի աշխատանք կատարող, իսկ սույն կարգի 3-րդ կետով նախատեսված դեպքում՝ նաև ստուգվող ժամանակաշրջանում աշխատանք կատարած (Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 13-րդ հոդվածի իմաստով՝ աշխատանքային հարաբերությունների մեջ նախկինում գտնված) անձանց աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերը կամ գրավոր պայմանագրերը, իսկ անհրաժեշտության և առկայության դեպքում՝ նաև գործատուի կողմից հաստատված հաստիքացուցակը.

2) կազմում են ստուգման պահին փաստացի աշխատանք կատարող, իսկ սույն կարգի 3-րդ կետով նախատեսված դեպքում՝ նաև ստուգվող ժամանակաշրջանում աշխատանք կատարած այն անձանց ցանկը, որոնց մասով գործատուն չի ներկայացնում աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ կամ գրավոր պայմանագիր»:

Որոշմամբ սահմանված Հավելված 1-ի 4-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն. «Սույն կետի 4-րդ ենթակետով ներկայացված հայտարարությունն ստուգման արդյունքում ստուգում իրականացնող անձանց կողմից կազմվող՝ աշխատողի աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու (այսինքն՝ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտի կամ գրավոր պայմանագրի բացակայության) փաստի վերաբերյալ կազմվող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հուլիսի 25-ի N 1259-Ն որոշման N 2 հավելվածով սահմանված արձանագրության (այսուհետ՝ արձանագրություն) անբաժանելի մասն է»:

Հավելված 1-ի 5-րդ կետի համաձայն. «Արձանագրության մեջ պարտադիր նշվում են սույն կարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված ցանկում ընդգրկված անձի (անձանց) անունը, ազգանունը, անձնագրային տվյալները, նրա (նրանց) կողմից կատարվող աշխատանքային պարտականությունների բնույթը»:

Իսկ Հավելված 1-ի 4-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն աշխատողի աշխատանքի ընդունումը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով գրավոր չձևակերպելու փաստն արձանագրելու համար ստուգում իրականացնող անձինք կազմում են ստուգման պահին փաստացի աշխատանք կատարող, իսկ սույն կարգի 3-րդ կետով նախատեսված դեպքում՝ նաև ստուգվող ժամանակաշրջանում աշխատանք կատարած այն անձանց ցանկը, որոնց մասով գործատուն չի ներկայացնում

աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտ կամ գրավոր պայմանագիր:

Ստուգումն իրականացնող անձանց պնդմամբ ստուգման առաջին օրն իրենց կողմից պահանջվել են ներկայացնել փաստացի աշխատանք կատարող անձանց աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերը կամ գրավոր պայմանագրերը, որոնք, սակայն, չեն ներկայացվել: Սակայն նշված հանգամանքը ստուգումն իրականացնող անձանց կողմից որևէ կերպ չի արձանագրվել, ինչպես նաև չեն կատարվել դրանից բխող համապատասխան գործողություններ: Ավելին, ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից 18.06.2015 թ-ին կազմված թիվ 1 արձանագրության համաձայն ստուգման պահին փաստացի աշխատել են թվով 11 (տասնմեկ) աշխատակիցներ, որոնցից թվով 5 (հինգ) աշխատողների վերաբերյալ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտեր կամ գրավոր պայմանագրեր առկա չեն եղել: Նշվածից հետևում է, որ թվով 6 (վեց) աշխատողների վերաբերյալ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտերը կամ գրավոր պայմանագրերը ստուգման առաջին օրը ներկայացվել են ստուգող անձանց, ինչը, սակայն, հակասում է նիստի ընթացքում ստուգող անձանց կողմից հնչեցված պնդումներին, որ ստուգման առաջին օրն իրենց որևէ փաստաթուղթ չի ներկայացվել:

Վերը բերված փաստական հանգամանքներից ըստ էության հետևում է, որ 18.06.2015 թ-ի թիվ 1 արձանագրությունում նշված տվյալները հիմնավոր չեն և չեն համապատասխանում իրականությանը:

Բացի այդ, հիշատակված իրավանորմերի դրույթներից հետևում է, որ ստուգման առաջին օրը «Հագոյան» Ա/Կ-ում փաստացի աշխատող աշխատակիցների վերաբերյալ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտեր կամ գրավոր պայմանագրեր չներկայացվելու պայմաններում, ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից 26.06.2015 թ-ին կազմված արձանագրությունում պարտադիր պետք է նշվեին ստուգման պահին փաստացի աշխատող բոլոր աշխատակիցների տվյալները (թվով 11): Սակայն տվյալ դեպքում արձանագրությունում նշվել են միայն թվով 5 աշխատակիցների տվյալները:


Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ Ակտը կազմվել է ՀՀ կառավարության 25.07.2013 թ-ի թիվ 1259-Ն որոշմամբ սահմանված կարգի պահանջների խախտմամբ, ինչը հիմք է հանդիսանում ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետի դրույթներով բողոքը բավարարելու համար:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո թ ո շ ու մ է՝

Չեղյալ համարել Շենգավիթի ՀՏ 08.07.2015 թ-ի թիվ 6106956 ակտը:

Հանձնաժողովի նախագահ՝


Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ

